«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 77-13-27-00

# ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

## Ուսանողական գիտական ընկերության

**(2021-2022թթ. ուս տարվա 1-ին կիսամյակ)**

ք. Իջևան «21» դեկտեմբերի, 2021թ.

| № | Նախատեսվող միջոցառման բնույթը | Խորագիրը / Թեման | Անցկացման օրը / շաբաթը | Համառոտ նկարագրությունը |
|---|---|---|---|---|
| ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | | |
| 1. 1 | Էսսեների մրցույթ | «Մեր հոգու պատերազմը», «Նամակ քեզ», «Ժամանակի մեքենա», «Ներկայի, անցյալի ու ապագայի միջև» | 04.11 - 14.11 | Էսսեների մրցույթին մասնակցել են 6 ուսանողներ: «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի դասախոսների հետ ձևավորեցինք |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ընտրող հանձնաժողով: Հանձնաժողովը, քննելով էսսեները, որոշեց, որ որևէ մասնակցի հաղթանակ չի տրվի: |
| **2.** | Word, Excel, Power Point ծրագրերի ուսուցում | | 07. 12 (առկա) , 08. 12 (հեռավ ար), 09. 12 (հեռավ ար): | Word, Excel, Power Point ծրագրերի ուսուցումը իր շուրջը միավորեց տարբեր համալսարաններ ի ուսանողների: Քանի որ մասնակիցները տարբեր շրջաններից էին, և ծրագրին մասնակցելու ցանկություն էին հայտնել բազում ուսանողներ, ուստի ծրագիրն իրականացվեց երեք անգամ՝ և՛ առկա, և՛ հեռավար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տարբերակներով: Մասնակիցները ստացան անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ: Դասընթացն իրականացրեց ՀԳՖ համակարգչային սրահի պատասխանատու Նելլի Եգանյանը: |
| ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **3.** | Ինտելեկտուալ խաղ | «Զբոսաշրջություն» | 19.10 | Zoom հարթակում կայացավ ինտելեկտուալ խաղ «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողների համար: Խաղը կազմված էր 2 փուլից, որոնցից առաջինում մասնակիցները պատասխանեցին մասնագիտական ոլորտի իմացական մի շարք հարցերի quizizz.com կայքի միջոցով: 2-րդ փուլում մասնակիցները պատասխանեցին մասնագիտությանն առնչվող տրամաբանական հարցերի: Խաղի արդյունքներն ամփոփելով` հաղթող ճանաչվեց «Զբոսաշրջություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Հերմինե Սանթրոսյանը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **4.** | Դասընթաց | «Հետազոտական աշխատանք գրելու նորմերը» | 14.10 - 17.10 | Սեպտեմբերի 14-ին և 17ին կայացավ «Հետազոտական աշխատանք գրելու նորմերը» թեմայով երկօրյա առցանց դասընթացը, որը վարեց Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ա.գ.թ., պրոֆեսոր Գուրգեն Հովհաննիսյանը։<br><br>Դասընթացի ընթացքում խոսվեց հետազոտական աշխատանքների հիմնական կառուցվածքային և բովանդակային տարրերի մասին, ներկայացվեց հետազոտությունների իրականացման հիմնական ալգորիթմները, աշխատանքի ճիշտ ներկայացման առանձնահատկությունները և կարգը։<br><br>Տրվեցին թեմայի շրջանակներում ուսանողներին հուզող հարցերի պատասխանները։ |
| ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **5.** | Դասընթաց | «C++-ի հիմունք ներ» | 06. 12 (առցանց) 10.12 (օֆֆլայն) | Դասընթացին մասնակցել են ԻԿՄ առաջին և երկրորդ կուրսի ուսանողները: Հիմնական նպատակը ուսանողների բացթողնված գիտելիքների լրացումն է եղել, ալգորիթմական մտածողության զարգացումը և c++ լեզվով  տարբեր ծրագրերի իրականացումը: |
| **6.** | Կոնսուլտացիա | Էիմ, Դիսկրետ մաթեմատիկա և մաթեմատիկական անալիզ առարկաների քննությունների նախապատրաստում | 16.12 | Կոնսուլտացիայի ընթացքում ուսանողները ստացել են իրենց հուզող հարցերի պատասխանները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7. | Դասընթաց | «C++-ի հիմունքներ» | 06.12 (առցանց) 10.12 (օֆֆլայն) | Դասընթացին մասնակցել են ԻԿՄ առաջին և երկրորդ կուրսի ուսանողները: Հիմնական նպատակը ուսանողների բացթողնված գիտելիքների լրացումն է եղել, ալգորիթմական մտածողության զարգացումը և c++ լեզվով տարբեր ծրագրերի իրականացումը: |
| ԳԻՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ | | | | |
| Զբոսաշրջության խմբակ | | | | |
| 8. | Այցելություն/դասընթաց | Իջևանի պատմաերկրագիտական թանգարան | 17.09 | Դասընթացի շրջանակներում մասնակիցները այցելել են Իջևանի պատմաերկրագիտական թանգարան ծանոթանալու ամբողջ Տավուշի մարզից պեղված գտածոներին: Իրենց մասնակցությունն են ունեցել ինչպես Տուրիզմ բաժնի,այնպես էլ ֆինանսներ բաժնի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ուսանողները:<br><br>Դասընթացավարն եր ՝ Սանթրոսյան Հերմինե, Քոչարյան Լիլիթ:<br><br>Մասնակիցների քանակը՝ 15: |
| 9. | Դասընթաց/քննարկում | «Միջազգային տուրիզմ»,«Հյուրանոցային իդուստրիա» | 08.12 | Դասընթացի արդյունքում մասնակիցները ծանոթացան միջազգային տուրիզմին,որի մեջ ներառված էր նաև «covid-19-ի հետևանքները միջազգային տուրիզմի վրա», ծանոթացան նաև հյուրանոցային ինդուստրիային, տեղի ունեցավ բուռն քննարկումներ վերը նշված թեմաների վերաբերյալ:<br><br>Դասընթացավարն եր ՝ Սանթրոսյան Հերմինե, Դարբինյան Արուսյակ:<br><br>Մասնակիցների քանակը՝ 15: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| «FRANÇAIS FACILE» խմբակ | | | | |
| 10. | Դասընթաց | «Խոսակցական արտահայտություններ» | 11.11 | Դասընթացի ընթացքում մասնակիցները ներկայացան ֆրանսերենով, սովորեցին հիմնական խոսակցական արտահայտություններ։<br><br>Դասընթացավարն եր՝ Ալլա Օհանյան, Լուսյա Շախպարյան։<br><br>Մասնակիցների քանակը՝ 10։ |
| Մանկավարժների խմբակ | | | | |
| 11. | Դասընթաց | «Վարվեցողության կանոններ» | 06. 10 | Դասընթացին մասնակիցները ծանոթացել են վարվեցողությունը դպրոցում,թանգարանում , գրադարանում և այլ վայրերում։Ներկայացվել է վարվեցողության կանոնները հասարակական վայրերում։ Անդրադարձ է կատարվել, թե որտեղ ,երբ և ինչպես պետք է ներկայանալ ։ Դասընթացը իրականացվել է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | փոխադարձ հարց ու պատասխանի միջոցով: Դասընթացավարն եր՝ Մերի Եգանյանը և Ամիկ Սարկիսյան: Մասնակիցների քանակը՝ 11: |
| 12. | Սեմինար-քննարկում | «Մեր հույզերն ու զգացմունքները» | 30. 11 | Դասընթացի մասնակիցները ծանոթացան հույզերին ու զգացմունքներին, դրանց արտահայտմանը: Անդրադարձ կատարվեց ամենաարդիական թեմաներից մեկին՝ սթրեսին: Սեմինար-քննարկումը ուղկեցվեց հետաքրքիր հարց ու պատասխանով, մեջբերումներով: Քննարկումը ավարտվեց հոգեբանական հետաքրքրաշարժ տեխնիկայի կիրառմամբ: Սեմինար- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | քննարկումը վարեց հոգեբան Վ.Մելիքսեթյանը։<br>Մասնակիցների քանակը՝ 20։ |
| **Պատմաբանների խմբակ** | | | | |
| 13. | Սեմինար-քննարկում | «Կիլիկյան Հայաստան» | 19. 10 | Սեմինարի շրջանակներում ուսումնասիրվել է Կիլիկյան Հայաստանի աշխարհագրական դիրքը՝ Կիլիկիան իշխանության շրջանում, թագավորության շրջանում, դիվանագիտական հարաբերությունները, անկումը և անկման պատճառները։Նյութը տրվելուց հետո հարցերի և բանավեճ-քննարկման միջոցով ամփոփվեց սեմինարը։ Սեմինար - քննարկումը վարեցին՝ Կարինե Օհանյանը, Մերի Բեգինյանը, Սոսե Ջանինյանը և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Գոհար Գևորգյանը։<br><br>Մասնակիցների քանակը՝ 5։ |
| 14. | Միջոցառում | Պատմաբանների օրվան նվիրված | 05. 12 | Պատմաբանների օրվան նվիրված ԵՊՀ ԻՄ գրադարանում կայացել է միջոցառում, որի շրջանակներում «Պատմություն» մասնագիտության 1-4-րդ կուրսերի 10 ուսանող հանդես են եկել զեկույցներով, այնուհետև հարց ու պատասխանի միջոցով ամփոփել միջոցառումը։ Ներկա են եղել նաև «Հայոց պատմության և հասարակագիտությ ան» ամբիոնի կրթական ծրագրերի ղեկավարը և դասախոսներ։ |
| 15. | Բանախոսությո ւն | «Թալիբան շարժում» | 18. 12 | Բանախոսության շրջանակներում ներկայացվել է շարժման նախապատմությո ւնը, առանձնահատկու |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | թյունները, հետևանքները և մեծ տերությունների դերն ու նշանակությունը: Բանախոսն էր պ.գ.թ., դոցենտ Նելլի Մինասյանը: |
| **Բանասերների խմբակ** | | | | |
| 16. | Ճանաչողական միջոցառում | «Թանգարանային ուսումնասիրություն» | 24. 09 | Ճանաչողական միջոցառման ընթացքում ներկայացվել է տարբեր շրջաններում գտնվող պատմամշակութային վայրեր, որոնք առնչվում են հայ մեծերին: Ինչպես նաև խոսվել է դրանց ստեղծման պատմության ու կարևորության մասին:<br><br>Ճանաչողական միջոցառումը անցկացրեց Մերի Ստեփանյանը:<br><br>Մասնակիցների քանակը՝ 10: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17. | Ուսուցողական միջոցառում | Կետադրություն | 13. 11 | Ուսուցողական միջոցառման ընթացքում ներկայացվել է հայոց լեզվի կետադրական կանոնները: Վարժությունների միջոցով ամրապնդվել է ստացած գիտելիքները: Մասնակիցների քանակը՝ 12: |
| ՈՒԳԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ | | | | |
| 18. | Բանավեճի առաջնություն | #Բանավեճի_ներբուհական_առաջնություն_ԵՊՀԻՄ_ՈւԳԸ | Կիսամյակի ընթացքում | Սեպտեմբերի 7*ին ՈՒԳԸ ֆեյսբուքյան և ինստագրամյան պաշտոնական էջերում տեղադրվել մրցաշարի հայտադիմումը, որի արդյունքում ձևավորվել և մասնակցել 12 թիմեր՝ բաղկացած 4-ական անդամներից: Հոկտեմբերի 1-ին կայացել է դասընթաց, բանախոսն էր՝ «Restart Ijevan» ՀԿ- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ի ծրագրերի համակարգող՝ Մելինե Գևորգյանը: Բանախոսության շրջանակներում Մելինե Գևորգյանը մանրամասնորեն ներկայացրել է բանավեճի «Կառլ Պոպեր» ֆորմատը, որով էլ ընթացել է առաջնությունը, ընդգծել է առողջ բանավեճերի և գիտելիքների ձեռքբերման կարևորության մասին: Վիճակահանությ ան արդյունքում ձևավորվել են մրցակից թիմեր: Սկզբնական փուլում թիմերը նախօրոք իմացել էին իրենց դիրքորոշումները, իսկ կիսաեզրափակչու մ խաղից 15 ր առաջ վիճակահանությա մբ էին իմանում: Այնուհետև շուրջ 2 ամսի ընթացել է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | բանավեճի փուլերը, բացառությամբ եզրափակչի: Եզրափակիչ խաղը մեծ հանդիսավորությամբ կայանալու է հունվար ամսին՝ քննական շրջանից հետո: Մրցաշարի ընթացքում բանավեճեր իրականացվել են հետևյալ թեմաներով՝<br>1. Բարձագույն կրթությունը ՀՀ-ում պետք է լինի անվճար<br>2. ՀՀ-ում համայնքների խոշորացումը կհանգեցնի համաչափ զարգացման<br>3.Համակարգչային խաղերը բացասաբար են անդրադառնում դեռահասների վրա<br>4.ՀՀ-ում COVID-19-ի դեմ պատվաստումը պետք է լինի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | պարտադիր<br>5. Պատերազմող երկրներում ԶԼՄ ները պետք է վերահսկվեն։<br>6.Բժշկական փորձերում կենդանիների օգտագործումը արդարացված է<br><br>7. «ՀՀ-ում կանանց իրավունքները պաշտպանված են»<br><br>8. «ՀՀ-ում հղիության արհեստական ընդհատումը պետք է արգելվի»<br><br>9. «ՀՀ-ում թուրքական ապրանքների վաճառքը պետք է արգելվի»<br><br>Բանավեճերի դատավորներ են եղել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈւԳԸ նախագահության անդամները և նախորդ մրցաշարի լավագույն թիմերից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ուսանողները, իսկ արդեն կիսաեզրափակչում նաև փորձագետներ՝ Հ. Մովսիսյան, Լ.Բեգինյան: |
| 19. | Ցերեկույթ | «Հավերժ երիտասարդ բանաստեղծը» | 07. 10 | Գրադարանավարի օրվա կապակցությամբ Տավուշի մարզային գրադարանում կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Պետրոս Դուրյանի 170-ամյակին: Միջոցառումն իրականացվել է «Արևմտահայ գրականության միամսյակ» ծրագրի շրջանակներում՝ համագործակցելով Տավուշի մարզային գրադարանի հետ: խորագիրը կրող միջոցառմանը ևս մեկ անգամ մեծարումի խոսք է ասվել Դուրյանի և նրա ստեղծագործությունների մասին: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20. | Գրքի քննարկում | Դանիել Գոուլմանի «Հուզական Ինտելեկտ» | 18. 10 | Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոնի հետ համագործակցելով՝ ԵՊՀ ԻՄ Ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել է գրքի քննարկում՝ Դանիել Գոուլմանի «Հուզական Ինտելեկտ» գրքի շուրջ: |
| 21. | Կինոդիտում-քննարկում | «Little Boy» | | Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոնի հետ համագործակցելով՝ ԵՊՀ ԻՄ Ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել է «Little Boy» ֆիլմի քննարկում: |
| 21. | Ադրբեջաներենի ուսուցում | - | 03. 12. 2021-03. 03. 2022 | Դեկտեմբերի 3-ից մեկնարկել է ադրբեջաներենի եռամսյա դասընթացը: Դասընթացը վարում է ԵՊՀ Արևելագիտության ամբիոնի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | դասախոս Ամալյա Պետրոսյանը: Մասնակիցների քանակը՝ 20 |
| 22. | Գրքի քննարկում | Ջեյն Օսթինի «Էմմա» | 18. 12 | Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոնը ԵՊՀ ԻՄ Ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ դեկտեմբերի 18-ին՝ ժամը 13:00-ին, կազմակերպում է գրքի քննարկում՝ Ջեյն Օսթինի «Էմմա» վեպի շուրջ: Քննարկումը վարել է «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Ինգա Ասլանյանը: |

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ՝ Մ. Ասիլյան

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ քարտուղար՝ Ա. Խաչատրյան